ների բովը՝ դժոխքը։ Դրախտի և դժոխքի այս հասկացողությունը չար և բարի գործերի համար այս վարձատրության գաղափարը անշուշտ մշակված էր եղել քրիստոնեության հաստատվելուց շատ առաջ, որոշ չափով և զրադաշտական կրոնի ազդեցության տակ։ Քրիստոնեության հաղթանակից հետո դրախտի և դժոխքի հասկացողությունը ստացավ նոր գունավորում՝ վերջին դատաստանի պատկերում։ Մազե կամուրջի օգնությամբ արդարներին մեղավորներից ջոկելու հասկացողությունը[98] մինչև վերջին ժամանակներս ոչ պակաս ուժեղ էր, քան թե վերջին ահեղ դատաստանի քրիստոնեական ըմբռնումը։ Շատ բնորոշ պատմություն է պահպանվել Գորիսի բնակչության մեջ։ Պատմում են, թե եղել է մի այնպիսի ժամանակ, երբ մեռելին թաղելու համար պետք էր փոխադրեին կամրջով Խորան գետի մյուս ափը՝ գերեզմանատուն։ Կամրջի մուտքի առաջ նստած էին լինում գյուղի ծերունիներն ու մեծավորները։ Դագաղը գետնին վայր դնել տալուց հետո նրանք սկսում էին մեկ առ մեկ քննել հանգուցյալի արարքները։ Եթե գտնում էին, որ նա վարել է առաքինի, ողորմածությամբ լի կյանք, թույլ էին տալիս դիակը կամուրջով մյուս ափը տեղափոխել։ Եթե դատաստանի քննությունը հակառակ եզրակացության էր հանգում՝ ննջեցյալի տերերը պետք է դիակը ետ տանեին և նրա հոգու համար այնքան ողորմություն անեին, որ դրանով քաված լինեին նրա հանցագործ լինելը[99]։

Քրիստոնեական հասկացողությունների համաձայն վերջին դատաստանը կտրելու արտոնությունը վերապահված է Քրիստոսին՝ աստծուն, որը կարող է և որոշ հանցագործություններին ներողամիտ վերաբերվել։ Այդ ներողամտությունը՝ ողորմածությունը առաջացնելու համար ննջեցյալի մերձավորները դիմում էին խոսքի մագիային և աղերսում՝

«Աստված ողորմի այս ինչի հոգուն»։

Հանգուցյալն էլ կոչվում էր ողորմածիկ[100]։ Խոսքի նույնանման զորությամբ մյուս աշխարհ հեռացածների վիճակի վրա ազդելու նպատակով աղերսում էին՝

«Լուս լինի այս ինչի հօքին»։

Հանգուցյալն էլ կոչվում էր լուսահօք, որպեսզի հակառակ այն բանին, որ այս աշխարհում դեգերող հոգիները շրջում են գիշերվա մթության մեջ՝ այն աշխարհում նրանք ապրեն լույսի մեջ, իրենք էլ լինեն լուսէղէն[101], իրենք էլ լույս արձակեն։ Գուցե այստեղից է բխում և այն հավատը, որ ամեն մարդ ծնվելիս ունի իր աստղն ու իր արևը։ Զանգեզուրցին էլ երդվում է իր արևով՝ արէ՞վրս վրկա և պահանջում է դիմացինից ճշմարտության վկայության հաստատում երդվողի արևով՝ արէ՞վրտ սիրէս։ Խոսքի ճշմարտության վկա արևի հետ բերում էր նաև հոր կամ պապի հոգին, հոր կամ պապի գերեզմանը։ Մեկին անբախտություն է պատահում՝ արևը խավարում է։ Մարդը ծնվում է, լավ կամ վատ աստղով. բախտավորը՝ լավ աստղով. հովանավորվող է ծնված, մարդը մեռնում է—նրա աստղն էլ թեքվում է՝ խավարում, ընկնում է երկնքից։

---

98 Կամրջի օգնությամբ ննջեցյալների հոգիները դատի ենթարկվելու հավատը տարածված է բազմաթիվ պրիմիտիվ ժողովուրդների մեջ, օրինակ՝ Հյուս. Ամերիկայի հնդկացիների մեջ, որոնք արիությունից զուրկ և ռազմական գործում երկչոտ մարդկանց հոգիները համարում էին դատապարտված մշտական թափառումների ննջեցյալների աշխարհից դուրս։ Անդ., էջ 411։

99 Մյուս աշխարհ հեռանալիս քննության ենթարկվելը լայն ծավալ էր ստացել Եգիպտոսում և մանրամասնություններով ներկայացված է պապիրուսների և որմնանկարների վրա։

100 Արեղյան Մ., Der armenische Volksglaube, էջ 22, ողորմածիկ բառը բացատրում է որպես ողորմություն տված մեկը։

101 Հմմտ. հեքիաթների մեջ լույս և մութ աշխարհների հակադրությունը։